Doi: 10.56737/2953-7843-2025.08-109

ՔՆԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔ–ՍՓՅՈՒՌՔ ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1988–1991 ԹԹ.)

Սկիզբը՝ թիվ Ը.

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մայր Աթոռն աշխատանքներ էր տանում աղետի գոտու վերականգնման համար առավել մեծ չափով նվիրաբերումներ կատարելու, ինչպես նաեւ ավերված քաղաքները վերաշինելու համար համապատասխան ծրագրեր մշակելու ուղղությամբ։ Այդ նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն նախատեսեց կոչ ուղղել հատկապես Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաների մոտ մեկ միլիոն կազմող հայությանը. կազմակերպել մեծագումար հանգանակություններ մեկ քաղաքի վերաշինության համար՝ այնտեղ կառուցելով 5–10 հազար բնակչության համար նախատեսված բնակելի շենքեր եւ հիմնարկներ[1]։ Կաթողիկոսը պետական իշխանությունների հետ համաձայնություն էր ձեռք բերել ամերիկահայությունից ակնկալվող բոլոր օժանդակությունները կենտրոնացնել Ստեփանավան քաղաքի վերակառուցման վրա[2]։ Ուստի Վազգեն Ա.-ն առաջարկեց Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի արեւելյան թեմի առաջնորդարանի հավաքած դրամական նվիրատվությունները հատկացնել Ստեփանավան քաղաքում բնակարանակենցաղային, բուժական, կրթական համալիրը վերաշինելու գործին։ Շինարարության նախանյութերը հավաքվելու էին ԱՄՆ-ում, իսկ միութենական արտադրություններից օգտագործելու էին միայն պողպատ եւ շաղախ։ Ավանի կառուցման

---

[1] *Տես* Ե. Մելքոնյան, *«Մեռելներուս իբրեւ խաչ՝ ես այս ծառը տնկեցի», Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում (11 դեկտեմբեր 1988 թ.), «Էջմիածին» ամսագիր, թիվ 11–12, 1988, էջ 40։*

[2] *Տես* Աբրահամ աբեղ. Մկրտչյան, *Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայաստանի երկրաշարժից տուժած շրջաններ. Վեհափառ Հայրապետի խոսքը Ստեփանավանի Ս. Աստվածածին եկեղեցում, «Էջմիածին» ամսագիր, թիվ 1, 1989, էջ 26։*

ծրագրում նախատեսվել էին երկհարկանի բնակարաններ, հիվանդանոց-ատամնաբուժարան, մանկապարտեզ, դպրոց, գրադարան, խանութներ, խաղահրապարակներ, հավաքավայրեր։ Կառույցների շինարարությունը տարբերվելու էր Հայաստանում ընդունված ձեւերից, տները կառուցելիս օգտագործվելու էին մետաղյա կապերով ամրացված փայտեր, որոնք պիտի լինեին կուռ եւ ունակ ստորգետնյա ավերիչ ուժերին դիմակայելու։ Բոլոր կառույցները կահավորվելու էին ամերիկյան վերջին տեխնիկայի սարքավորումներով։

Ստեփանավանի վերաշինության կազմակերպումն անձամբ ստանձնեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն։ Քաղաքի վերաշինության ծրագիրը Հայ Առաքելական Եկեղեցու մնայուն ծրագրերից էր, որը հիմնականում իրագործվեց ԱՄՆ Հայոց Եկեղեցու Առաջնորդարանի կողմից։

Ծրագիրը կյանքի կոչելու նպատակով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը որոշեց մեկնել ԱՄՆ ամերիկահայության միասնական ջանքերով օգնության գործը կազմակերպելու, հայկական կրոնական եւ աշխարհիկ, քաղաքական, մշակութային, բարեսիրական կազմակերպությունների համագործակցությունը տեղում ապահովելու, գոյացած եւ սպասվող նվիրաբերությունները մեկ ընդհանուր նպատակի կիրառելու համար՝ որպես Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաների հայության ներդրում վերականգնման գործին։ Ներկայացվելու էին նաեւ երկրաշարժի պատճառած ավերածությունները, ինչպես նաեւ վերաշինական այն ծրագրերը, որոնք վերաբերում էին ավերված քաղաքների, հատկապես Ստեփանավան վերակառուցմանը։ Այդ նպատակով Վազգեն Ա.-ն 1988 թ. դեկտեմբերի 20-ին հեռագիր հղեց ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, որում առաջարկում էր իր նախագահությամբ 1989 թ. հունվարի 20-ին Նյու Յորքում հրավիրել համազգային խորհրդակցական ժողով[3]։ Կաթողիկոսն անհրաժեշտ էր համարում հրավիրել ԱՄՆ երկու թեմերին, Կիլիկյան Աթոռի երկու թեմերին, Կանադայի, Բրազիլիայի եւ Արգենտինայի թեմերին, Կաթողիկե եւ Ավետարանական համայնքներին, ՀԲԸՄ-ին, Ամերիկայի հայկական համագումարին, երեք ավանդական կուսակցություններին՝ ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ, ազգային, մշակու-

---

[3] *ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 99, թ. 1։ Տես նաեւ՝* Ս. Սուքիասյան, *Նամակներ Աստվորից (նամակագրություն՝ Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր պետերի, առաջնորդների, քաղաքական եւ մշակութային գործիչների միջեւ), Երեւան, «Անտարես» հրատ., 2019, էջ 33–34։*

թային, բարեսիրական հայտնի միություններին՝ յուրաքանչյուրը չորս եւ երկու անձերով։ Խորհրդակցական ժողովը ընտրելու էր Ստեփանավան քաղաքի վերաշինության կենտրոնական հանձնաժողովը՝ բաղկացած 30–40 անձից, որից էլ կազմվելու էր վերաշինության հանձնաժողովի գործադիր մարմինը՝ բաղկացած 9–12 անձից[4]։

Կաթողիկոսի այցը ԱՄՆ տեղի ունեցավ 1989 թ. փետրվարի 3–11-ին։ Պատվիրակության կազմում էին հոգեւորականներ եւ մտավորականներ։ Վազգեն Ա.-ի հրավերով այցին միացավ նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ. Հայրապետը. նպատակը երկու կաթողիկոսների հովանավորության ներքո ամերիկահայության համախմբումն ու հայրենաշեն գործի սկզբնավորումն էր։ Գարեգին Բ.-ին ուղեկցում էին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Ազգային Կենտրոնական վարչության ատենապետն ու փոխատենապետը, ազգային երեսփոխաններ Խաչիկ Պապիկյանը եւ Սուրեն Խանամիրյանը։

Երկու կաթողիկոսները 1989 թ. փետրվարի 3-ին միաժամանակ ժամանեցին Նյու Յորք եւ հանդիսավոր կերպով մուտք գործեցին Ս. Վարդան Մայր տաճար[5]։ Ինչպես որ նախատեսված էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն հանդիպումներ ունեցավ Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաների հայկական համայնքների քաղաքական, բարեգործական եւ մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ։ Վազգեն Ա.-ն ամերիկահայությանը ներկայացրեց երկրաշարժից ավերված քաղաքների եւ գյուղերի վերաշինության ծրագիրը, որպեսզի վերջիններս հստակ պատկերացում կազմեին, թե Հայաստանը շինարարական ինչ իրագործումների կարիք ունի եւ իրենց միջոցներով մասնակցեին հայրենաշեն այդ գործին։ Վեհափառ Հայրապետը միաժամանակ ծանոթացավ ամերիկահայ գաղութի կատարած մեծածավալ աշխատանքին։

Փետրվարի 4-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խորհրդակցական հանդիպումներ ունեցավ Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսների, ապա Գարեգին Բ. կաթողիկոսի հետ, որոնց մանրամասն ներկա-

---

[4] Նույն տեղում։

[5] Տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում (19 փետրվար 1989 թ.), «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 16։ Տե՛ս նաեւ՝ Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 29։

յայտարեց ԱՄՆ այցելության ծրագիրն ու իր առաքելության նպատակը՝ միասնական ջանքերով առավելագույն արդյունքի հասնելու համար[6]։ Հաջորդ օրը Վեհափառ Հայրապետը ընդունեց ՀԲՀՄ ներկայացուցիչներին՝ Լուիզ Մանուկյան Սիմոնի գլխավորությամբ, ապա Բրազիլիայի հայ գաղութի ներկայացուցիչներին՝ Տաթեւ եպս. Ղարիպյանի գլխավորությամբ[7]։ Նույն օրը կաթողիկոսները հրավիրվեցին ԱՄՆ Կոնգրեսի պալատ եւ աղոթքով կատարեցին օրվա հերթական նիստի բացումը, ապա այցելեցին խորհրդային դեսպանատուն, որտեղ նրանց ընդունեց խորհրդային դեսպան Դուբինինը։

Փետրվարի 5-ին Նյու Յորքի ընդարձակածավալ Սբ. Հովհաննես տաճարում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն ավելի քան տասնհինգ հազար հայ հավատացյալների համար մատուցեց պատարագ, որին ներկա էր նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ն[8]։ Ամենակարեւորն այն էր, որ հայ ժողովրդի զավակները միասնաբար հավաքվել էին աղոթքի՝ պատրաստ համազգային համագործակցության։ Պատարագին ներկա էին նաեւ Գյումրիից բուժման համար ԱՄՆ բերված անդամահատված կամ այլ ծանր վնասվածքներ ստացած 18 երեխաները, որոնք տուժել էին երկրաշարժից[9]։

Փետրվարի 6-ին եւ 7-ին Ս. Վարդան եկեղեցում տեղի ունեցավ խորհրդակցական մեծ ժողով, որին ներկա էին հայ եկեղեցական բոլոր կազմակերպությունների պատգամավորները Կանադայից, ԱՄՆ-ից, Բրազիլիայից, Ուրուգվայից եւ Արգենտինայից, ինչպես նաեւ հայկական 26 կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները[10]։ Խորհրդակցության նպատակն էր միավորել բոլորի ջանքերը Վազգեն Վեհափառի առաջադրած ծրագրի իրականացման համար, այն է՝ միջոցները միավորել Ստեփանավան քաղաքի գոնե մասամբ վերականգնման համար։

---

[6] *Տե՛ս Ամենայն Հայոց Վազգեն Ա. Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 33։*

[7] *Նույն տեղում։*

[8] *Նույն տեղում։*

[9] *Նույն տեղում։*

[10] *ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 99, թ. 1, գ. 103, թ. 1–2։ Տե՛ս նաեւ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ.Վազգեն Ա. Հայրապետի քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում (19 փետրվար 1989 թ.), «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 16։ Տե՛ս նաեւ՝ Դիւան Մայր Աթոռի (27 փետրուար 1989 թ., Ս. Էջմիածին), Պաշտօնական հաղորդագրութիւն, «Էջմիածին» ամսագիր, թիվ 7, 1989, էջ 8։ Տե՛ս նաեւ՝* Ս. Սուքիասեան, *Նամակներ Աստվորից, էջ 35–37։*

Փետրվարի 6-ին՝ առաջին նիստում Վազգեն Ա.-ն ներկայացրեց երկրաշարժի հետեւանքով առաջացած ընդհանուր վիճակը եւ քանդված չորս քաղաքների եւ 58 գյուղերի վերաշինության ծրագիրը։ Կաթողիկոսն առաջարկեց բոլոր օգնությունները կենտրոնացնել Ստեփանավան քաղաքի վերաշինության գործին, յուրաքանչյուր կազմակերպության ստանձնել իր ցանկացած օգնության բաժինը՝ իր վրա պարտականություն վերցնելով նվիրաբերելու սարքավորումները, կահավորումը, մեքենաները եւ այլ անհրաժեշտ պիտույքները մեկ դպրոցի, մեկ մանկապարտեզի, հիվանդանոցի կամ առողջարանի, մեկ հասարակական շենքի կամ գործարանի համար[11]։ Համապատասխան կազմակերպությունը գնելու եւ առաքելու էր բոլոր սարքավորումներն ու անհրաժեշտ պիտույքները, իսկ շենքի շինարարությունն իրագործելու էր Հայաստանի կառավարությունը։

Ժողովի մասնակիցներին բաժանվեց չորս էջից բաղկացած տեղեկագիր, որում ամփոփ ներկայացված էին Ստեփանավան քաղաքի վերաշինության կարիքներն ու նախահաշիվները[12]։

Փետրվարի 7-ին Վեհափառների նախագահությամբ տեղի ունեցավ խորհրդակցական ժողովի երկրորդ նիստը, որտեղ տարբեր կազմակերպություններ ներկայացրին իրենց կազմակերպած հանգանակությունների շնորհիվ ստեղծված դրամագլուխները եւ խոստացան շարունակել աշխատանքներն այդ ուղղությամբ[13]։ Ժողովականները խոստացան նաեւ հոգալ իրենց ստանձնած շինությունների կահավորումները եւ սարքավորումները, որոնց ընդհանուր արժեքը հասնելու էր մինչեւ 20 միլիոն դոլարի[14]։ Քույր եկեղեցիները եւ ամերիկյան մի քանի բարեսիրական կազմակերպություններ պատրաստակամություն հայտնեցին արագացնել վերաշինության գործի համար նախատեսված օգնությունը։

Երկօրյա ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի փակման խոսքով։ Ինչպես նշում էր Վազգեն Ա.-ն, նման մեծ համազգային ժողով Սփյուռքում տեղի չէր ունեցել վերջին 50–60 տարիների ընթաց-

---

[11] ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 7–8։

[12] Տե՛ս Նարեկ Վրդ. Ալեքսանյան, *Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս միասնական այցելութիւնը Նիւ Եորք, «Հասկ», թիւ 1–2, Անթիլիաս–Լիբանան, 1989, էջ 41։*

[13] Տե՛ս Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 46։

[14] ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 8։

քում, երբ բոլորին ղեկավարում էր մեկ սկզբունք՝ աշխարհի բոլոր հայերը, Հայաստանից մինչեւ Սփյուռքի հեռավոր անկյունները կազմում էին «մեկ Եկեղեցի, մեկ ազգություն եւ մեկ Մայր հայրենիք»։

Խորհրդակցական ժողովին մասնակից յուրաքանչյուր կազմակերպություն ստանձնեց ավերված քաղաքների եւ գյուղերի, հատկապես Ստեփանավան քաղաքի վերաշինության իր մասնաբաժինը։ 18 կազմակերպությունները ժողովի ընթացքում հստակեցրին վերաշինության գործին իրենց մասնակցության բաժինը, իսկ մնացածները հստակեցնելու էին մոտ ապագայում[15]։ Յուրաքանչյուր կազմակերպություն ինքն էր որոշելու իր անելիքը, ուղղակի համագործակցելու էր Մայր Աթոռի հետ, որն էլ որպես միջնորդ, ներկայացնելու էր տվյալ պետական մարմնին եւ կազմվելու էր վերաշինության համապատասխան ծրագիրը։

Պետական շինարարական հատուկ Հանձնաժողովի հետ Մայր Աթոռի միջնորդությամբ ուղղակի հարաբերության մեջ մտնելու եւ իրենց հանձնառության առարկան ճշտելու նպատակով հանձնառություն ստանձնած կազմակերպությունների լիազորված ներկայացուցիչները հրավիրվում էին Հայաստան մարտ կամ ապրիլ ամսվա ընթացքում[16]։ Սկզբնական փուլում նախատեսվում էր, որ պետական միջոցներով համապատասխան շինությունները կառուցվելու էին մեկ-երկու տարվա ընթացքում։ Ստեփանավանում բոլոր տեսակի շինությունները պետությունը կառուցելու էր իր միջոցներով, իսկ ամերիկահայերն ստանձնելու էին շինության ներքին կահավորումը եւ սարքավորումը։ Այդ ընթացքում Նվիրատու հայկական կազմակերպություններն իրենց հանգանակած գումարներով ապահովելու էին իրենց խոստացած պիտույքների եւ սարքավորումների պատրաստությունը եւ հարմար ժամանակին դրանք առաքելու էին Հայաստան։ Պիտույքների եւ սարքավորումների առաքման ժամկետը ճշտվելու էր փոխադարձ համաձայնությամբ։ Նվիրատու կազմակերպությունների ներկայացուցիչները հրավիրվելու էին Հայաստան արդեն իսկ կառուցված համապատասխան շենքերում իրենց պիտույքների եւ սարքավորումների տեղադրմանը ներկա լինելու համար։

---

[15] Տե՛ս Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում (19 փետրվար 1989 թ.), «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 16։

[16] ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 103, թ. 1–2։ Տե՛ս նաեւ՝ Դիւան Մայր Աթոռի (27 փետրուար 1989 թ., Ս. Էջմիածին), Պաշտօնական հաղորդագրութիւն, «Էջմիածին» ամսագիր, թիվ 7, 1989, էջ 8–9։ Տե՛ս նաեւ՝ Ս. Սուքիասեան*, Նամակներ Աստվորից, էջ 35–37։*

Խորհրդակցական ժողովին մասնակցում էին նաեւ անհատ բարերարներ, որոնք նույնպես հանձն առան նվիրատվություններով մասնակցել վերաշինության գործին։ Հետագայում հայկական կազմակերպությունները ու կառույցները ավելի ընդլայնելով իրենց հայրենանվեր գործունեությունը՝ ստանձնեցին ամբողջական բնակելի թաղամասերի կառուցման աշխատանքներ։

1989 թ. փետրվարի 8-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Նյու Յորքի Հայոց առաջնորդարանում գումարվեց ԱՄՆ-ի թեմական ժողովը, որի ընթացքում թեմական առաջնորդները ներկայացրին թեմերում կատարվող աշխատանքները երկրաշարժից տուժած Մայր հայրենիքին անմիջական օգնություն հասցնելու համար[17]։

ԱՄՆ 1989 թ. փետրվարյան այցի ընթացքում տեղի ունեցան մի շարք պաշտոնական հանդիպումներ, որոնցից էր փետրվարի 9-ին ԱՄՆ նորընտիր նախագահ Ջորջ Բուշի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ի եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ի ընդունելությունը[18]։ Հանդիպման ընթացքում Ջորջ Բուշը հետաքրքրվեց հայ եկեղեցական կյանքով Հայաստանում, աղետի հետեւանքների մասին, հիշեց իր որդու այցելությունը Հայաստան, ինչպես նաեւ պատրաստակամություն հայտնեց օգնելու աղետից տուժած հայ ժողովրդին[19]։ Նույն օրն իսկ երկու կաթողիկոսները դիմավորեցին Հայաստանից ԱՄՆ ժամանած օդանավը, որը բուժման նպատակով ԱՄՆ էր բերել երկրաշարժից տուժած ծանր վիրավոր 36 երեխաների[20]։

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն Մայր հայրենիքին օգնություն կազմակերպելու հարցի շուրջ հանդիպումներ ունեցավ նաեւ Հայ

---

[17] Տե՛ս Ամենայն Հայոց Վազգեն Ա. Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 48։

[18] Տե՛ս Սուրեն Վանեցի, *Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի մատենագիտությունը, էջ 98։*

[19] ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 9։ Տե՛ս նաեւ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում (19 փետրվար 1989 թ.), «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 17։ Տե՛ս նաեւ՝ Ամենայն Հայոց Վազգեն Ա. Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 52–53։

[20] ՀԱԱ, ֆ. 823, ց. 8, գ. 102, թ. 9։ Տե՛ս նաեւ՝ Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 55։ Տե՛ս նաեւ՝ Նարեկ Վրդ. Ալեքսանեան, *Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս միասնական այցելութիւնը Նիւ Եորք, «Հասկ», թիւ 1–2, Անթիլիաս–Լիբանան, 1989, էջ 50։ Տե՛ս նաեւ՝ Պարտականութեան ձայնին համազգայնօրէն ունկնդիր, «Հասկ», թիւ 1–2, Անթիլիաս–Լիբանան, 1989, էջ 81։*

կաթողիկե եւ ավետարանական համայնքների ներկայացուցիչների հետ։ Փետրվարի 10-ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Նյու Յորքի Հայոց առաջնորդարանում ընդունեց Հայ կաթողիկե համայնքի ներկայացուցիչներ Ներսես եպիսկոպոս Սեթյանին եւ Հովհաննես վարդապետ Դերձակյանին[21]։ Ապա Նորին Սրբությունն ընդունեց Հայ բողոքական համայնքի ներկայացուցիչներ վերապատվելիներ Մովսես Ճանպազյանին եւ Կառլ Վարդան Ավագյանին, որոնք պատրաստակամություն հայտնեցին օժանդակելու վերականգնման համընդհանուր ջանքերին։ Նույն օրը Վեհափառ Հայրապետը Նյու Յորքի Հայոց առաջնորդարանում ընդունեց նաեւ մասնագետների մի մեծ խումբ՝ բժիշկներ, ինժեներներ, ճարտարապետներ, նկարիչներ եւ այլն, եւ նրանց հետ քննարկեց աջակցության հետագա աշխատանքների ծավալն ու կարգը։

Փետրվարի 11-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն ընդառաջելով Ամերիկահայոց արեւելյան թեմի Առաջնորդ Մեսրոպ արք. Աշճյանի հրավերին՝ այցելեց Նյու Յորքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի[22]։ 1933 թ.-ից ի վեր առաջին անգամ էր, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ Հյուսիսային Ամերիկայի Մայր Աթոռի միաբանության անդամ եկեղեցական հայրերը Ս. Էջմիածնի հովանու ներքո գտնվող թեմի կրոնավորները միասին ու պաշտոնապես այցելում էին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հովանու տակ գտնվող եկեղեցի, որը վկայում էր հայ ժողովրդի ու հատկապես ամերիկահայության ազգային-եկեղեցական կյանքում նոր էջի բացման մասին։

Այսպիսով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ի փետրվարյան այցը ԱՄՆ գործնական հողի վրա դրեց Ստեփանավան քաղաքի վերականգնման անչափ կարեւոր գործը։ Այցի արդյունքները, ինչպես նաեւ ամերիկահայության օգնության իրականացման գործնական ուղիները Ամենայն Հայոց կաթողիկոսը քննարկեց 1989 թ. փետրվարի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելած Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցի հետ[23]։

---

[21] *Տե՛ս Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետի այցը Միացյալ Նահանգներ, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 56։*

[22] *Նույն տեղում։ Տե՛ս նաեւ՝* ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԱԼԵՔՍԷԶԵԱՆ, *Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս միասնական այցելութիւնը Նիւ Եորք, «Հասկ», թիւ 1–2, Անթիլիաս–Լիբանան, 1989, էջ 52։*

[23] *Տե՛ս ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Ս. Մարգարյանցը Մայր Աթոռում, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 12։*

1989 թ. մարտին Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների (շվեյցարական բողոքական վերակազմյալ եկեղեցի (Յյուրիխ), Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ (Ժնեւ), Սբ. Էճիտիոյ Եկեղեցու համայնք (Հռոմ), կաթոլիկ «Կարիտաս» կազմակերպություն (Վիեննա), Վիեննայի «Կուրիեր»[24] թերթ, Ժնեւի հայ գաղութի ջանքերով, շվեյցարացի ժողովրդի հանգանակած միջոցներով) ներկայացուցիչները Մայր Աթոռի միջնորդությամբ ավելի քան 20 մլն դոլարի համաձայնագրեր կնքեցին վերաշինության պետական հատուկ հանձնաժողովի հետ, որոնք հիմնականում նախատեսված էին Ստեփանավանի վերաշինության համար[25]։

Ի կատարումն Ստեփանավան քաղաքի վերաշինության ծրագրի՝ Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մարգարյանցը 1989 թ. նոյեմբերի 17-ին ստորագրեց Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի թիվ 793 որոշումը, ըստ որի Ստեփանավանի քաղխորհրդի գործադիր կոմիտեին թույլատրվում էր ընդունել ԱՄՆ-ի Հայոց Եկեղեցու Առաջնորդարանի կողմից 500 բնակարանների, դպրոցի, մսուր-մանկապարտեզի, հանրային գրադարանի, ատամնաբուժական բաժանմունքով բուժարանի, մարզամշակութային համալիրի, առեւտրի կենտրոնի եւ ամֆիթատրոնի շինարարության նվիրատվությունը[26]։

Շինարարության առաջին փուլ էր հանդիսանում 8 բնակելի տների (128 բնակարան) շինարարությունը։ Ստեփանավանի քաղխորհրդին հանձնարարվում էր մեկ շաբաթում ապահովել շինարարության համար հողատարածք։ Շինարարական աշխատանքների կատարման ողջ ընթացքում Եկեղեցու՝ Ամերիկայի Հայոց Առաջնորդարանն ապահովվելու էր համապատասխան մասնագետների ներկայությունը, որոնց ցուցմունքներով էլ առաջնորդվելու էին հայ շինարարները[27]։

Ստեփանավան քաղաքի վերաշինության ծրագիրն առավել գործուն փուլ մտավ 1990 թ., երբ մայիսի 28-ից հունիսի 2-ը Ստեփանավանում բնակելի թաղամասի շինարարության բացման արարողությանը մասնակցելու, ինչպես նաեւ աղետի գոտուն հատկացվելիք հետագա օգնության հարցերը քննարկելու նպատակով Հայաստան ժամանեց ԱՄՆ Հայ

---

[24] Kurier:

[25] *Տե՛ս Դիւան Մայր Աթոռի (25 մարտ 1989, Ս. Էջմիածին), Հաղորդագրութիւն, «Էջմիածին» ամսագիր, թիվ 2–3, 1989, էջ 24–25։*

[26] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 162, գ. 755, թ. 1–3։*

[27] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 162, գ. 755, թ. 9–10։*

Առաքելական Եկեղեցու Արեւելյան թեմի «Հայաստանի օգնության կոմիտեի» հինգ հոգուց բաղկացած պատվիրակությունը, որը ղեկավարում էր «Գ. Հովնանյան քոմփանիզ» շինարարական խոշոր ընկերության նախագահ Գեւորգ Հովնանյանը[28]։

1990 թ. հունիսի 1-ին պատվիրակությունը մասնակցեց Ստեփանավանում նոր ստեղծվող առողջարան-քաղաքի տարածքում առաջին շենքի հիմնարկեքի հանդիսավոր արարողությանը[29]։

Հաջորդ տարի ԱՄՆ Հայոց Եկեղեցու առաջնորդարանի նվիրատվությամբ զարկ տրվեց դպրոցի շինարարությանը, որի մասին իրազեկում էր ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանի՝ 1991 թ. հունվարի 19-ին ընդունած կարգադրությունը՝ «Ստեփանավան քաղաքին Հյուսիսային Ամերիկայի հայկական Եկեղեցու առաջնորդարանի նվիրատվության մասին», ըստ որի ժողովրդական պատգամավորների Ստեփանավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեին թույլատրվում էր ընդունել Հյուսիսային Ամերիկայի հայկական Եկեղեցու առաջնորդարանի նվիրատվությունը՝ 700 աշակերտական տեղով դպրոց, որը կառուցվելու էր նվիրատուի ուժերով եւ միջոցներով[30]։ Ժողովրդական պատգամավորների Ստեփանավանի քաղխորհրդի գործկոմին եւ բնակարանային-ենթակառուցվածքների տնտեսության հանրապետական միավորմանը հանձնարարվում էր ՀՀ ճարտարապետության եւ քաղաքաշինության պետական կոմիտեի հետ համաձայնեցնելով՝ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով ապահովել դպրոցի շենքի շինարարության համար հողամասի հատկացումը։

ԱՄՆ Հայ Առաքելական Եկեղեցու Արեւելյան թեմի հանգանակած գումարով Ստեփանավան քաղաքում կառուցվեց 6 շենք 96 բնակարանով, իսկ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդարանի միջոցներով կառուցվեց նաեւ մեկ դպրոց[31]։

Երկրաշարժի հետեւանքները վերացնելու եւ հատկապես Ստեփանա-

---

[28] ՀԱԱ, ֆ. 113, ց. 164, գ. 318, թ. 1, 3։

[29] Տե՛ս «Հայրենիքի ձայն», Երեւան, 20 հունիսի, 1990, թիվ 25 (1298)։ Տե՛ս նաեւ՝ Ք. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հայ օգնության ֆոնդի գործունեությունը Հայաստանում 1989–1994 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտահանրամատչելի հանդես, Երեւան, 1 (111), 2008, էջ 224։

[30] ՀԱԱ, ֆ. 113, ց. 166, գ. 26, թ. 1–2։

[31] Տե՛ս Դիւան Մայր Աթոռի (14 դեկտեմբեր 1992, Ս. Էջմիածին), Օգնութիւններ երկրաշարժի աղէտեալներին, Արցախի ժողովրդին եւ բռնագաղթածներին, «Էջմիածին» ամսագիր, թիվ 12, 1992, էջ 20։

վանի վերաշինության գործում վիթխարի դեր կատարեց Հայ օգնության ֆոնդը[32], սկզբնական շրջանում կոչվում էր «Հայաստանի վերաշինության թեմական հիմնադրամ»), որը ստեղծվեց 1988 թ. երկրաշարժից անմիջապես հետո Նյու Յորքում՝ Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդարանի նախաձեռնությամբ[33]։ ՀՕՖ-ի գործունեության ոլորտներն ընդգրկում էին կրթության, գիտության, ենթակառուցվածքների վերականգնման, առողջապահության, տնտեսական, համայնքային զարգացման, երեխաների պաշտպանության, ընկերային աջակցության ոլորտները։

ՀՕՖ-ի ստեղծումից հետո Վազգեն Ա.-ի հետ խորհրդակցելուց հետո որոշվեց հիմնադրամի տրամադրության տակ եղած գումարները ներդնել Ստեփանավան քաղաքում, 30 հեկտար տարածության վրա կառուցել բնակելի ավան թաղամաս, որն ունենալու էր իր հիվանդանոցը, մանկապարտեզը, դպրոցը, գրադարանը, խանութները, մարզասրահը եւ կենցաղի համար անհրաժեշտ կառույցները[34]։

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՆԱԳԱՂԹԱԾ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հայոց Եկեղեցին աշխույժ էր նաեւ Ադրբեջանից 400 հազար փախստականներին աջակցելու գործում։ Շրջափակման մեջ գտնվող Հայաստանին եւ Արցախին սատարելու նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա.-ն բուռն գործունեություն ծավալեց արտերկրում՝ դիմելով միջազգային հեղինակավոր կրոնական կազմակերպություններին (Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ, Եւրոպայի եկեղեցիների համաժողով), պետությունների ղեկավարներին եւ Հայկական սփյուռքին՝

---

[32] *ՀՕՖ,* Fund for Armenian Relief:

[33] *Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, «Հայ սփյուռք» հանրագիտարանի խմբագրական հանձնաժողով՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր-տնօրեն) եւ ուր., Երեւան, Հայկական հանրագիտարան հրատ., 2003, էջ 48, 686–687։ Տե՛ս նաեւ՝* Ք. ՊԵՏՐՈՍՅԱՆ, *Հայ օգնության ֆոնդի գործունեությունը Հայաստանում 1989–1994 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների» գիտահանրամատչելի հանդես, Երեւան, 1 (111), 2008, էջ 207–225։ Տե՛ս նաեւ՝* Է. ՄԻՆԱՍՅԱՆ, Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Է. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, *Արցախ–Սփյուռք առնչությունները XX դարավերջին եւ XXI դարասկզբին, կոլեկտիվ մենագրություն, Երեւան, ԵՊՀ հրատ., 2022, էջ 139, 173։*

[34] *Տե՛ս* Ս. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, *Խորհրդանիշ մտքի եւ խղճի (հոդվածներ, հարցազրույցներ), Երեւան, «Նաիրի», 2001, էջ 49։ Տե՛ս նաեւ՝* Ս. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, *Խորհրդանիշ մտքի եւ խղճի (ակնարկներ, հարցազրույցներ), Երեւան, «Նաիրի», 2011, էջ 114։*

խնդրելով տնտեսական օգնություն ցույց տալ շրջափակման մեջ գտնվող Արցախին ու Հայաստանին։

Բռնագաղթածներին աջակցությունը ցուցաբերվում էր նաեւ Մայր Աթոռի միջոցով։ 1988–1989 թթ. բռնագաղթածների աջակցության համար հատկացվել է 3 մլն 80 հազար ռուբլի, 1990 թ.՝ 2 մլն 630 հազար ռուբլի, 1991 թ.՝ 454 հազար ռուբլի[35]։ Այդ դրամական օգնությունները հիմնականում ձեւավորվել էին արտասահմանյան նվիրատվություններից։

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ.-ն եւս իր հերթին տասը միլիոն լիբանանյան ոսկի[36] նվիրեց Վազգեն Վեհափառին «Ատրպեյճանի այլազան շրջաններէն եւ Սումկայիթէն թէ՛ Ղարաբաղի մէջ եւ թէ՛ մանաւանդ Խորհրդային Հայաստանի մէջ գաղթական եկող եւ հաստատուող ազգակիցների կարիքները հոգալու համար»[37]։

Հայ Եկեղեցու արտասահմանյան թեմերից եւ համայնքներից շատերը մեծագումար օժանդակություններ եւ կարեւոր շինարարական իրագործումներ էին կատարում նաեւ ուղղակի Հայաստանի պետական կամ քաղաքային իշխանությունների միջոցով, ինչպես օրինակ, ԱՄՆ-ի Հայ Առաքելական Եկեղեցու թեմական կենտրոնները, բրիտանահայ համայնքը («Օգնություն Հայաստանին»[38]), ֆրանսահայ համայնքը («ՍՕՍ Արմենիե»[39]) եւ ուրիշներ։

1989–1991 թթ. Մոսկվայում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում Սումգայիթից, Բաքվից եւ Կիրովաբադից (Գանձակ) ապաստանած բազմահազար փախստական ընտանիքներին մեծաքանակ օգնություններ կազմակերպեց նաեւ Հայ Եկեղեցու Ռուսաստանի թեմի առաջնորդարանը՝ հատկացնելով հատկապես սննդամթերք, հագուստեղեն ու դրամական

---

[35] *Տե՛ս Դիւան Մայր Աթոռի (14 դեկտեմբեր 1992, Ս. էջմիածին), Օգնութիւններ երկրաշարժի աղէտեալներին, Արցախի ժողովրդին եւ բռնագաղթածներին, «էջմիածին» ամսագիր, թիվ 12, 1992, էջ 17։*

[36] *Տասը միլիոն լիբանանյան ոսկին ժամանակի փոխարժեքով կազմում է 25 հազար ամերիկյան դոլար։*

[37] *Տե՛ս «Զարթոնք», Բեյրութ, 21 հոկտեմբերի, 1988։ Տե՛ս նաեւ՝ Դիւան կաթողիկոսարանի (19 հոկտեմբեր 1988, Անթիլիաս–Լիբանան), Ողջերթ Ս. էջմիածնի պատուիրակներուն, «Հասկ», թիւ 9–10, Անթիլիաս–Լիբանան, 1988, էջ 472։ Տե՛ս նաեւ՝* Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *էջմիածին–Անթիլիաս հարաբերությունները 1988–1990 թվականներին. Հայ Առաքելական Եկեղեցու վերամիավորման հարցը, «Հայագիտության հարցեր» հանդես, 3 /9/, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Երեւան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 79։*

[38] Aid Armenia.

[39] SOS-Arménie.

օգնություն, որը ստացվել էր Ռուսաստանի հայերից եւ արտասահմանի քույր եկեղեցիներից ու բարեսիրական կազմակերպություններից[40]։ Այս առիթով հիշատակվում է, որ 1988–1991 թթ. Մոսկվայում եւ Ռուսաստանի այլ քաղաքներում ապաստանած փախստական ընտանիքներին հատկացվել էր 2 մլն 56 հազար ռուբլի, որից 1988–1989 թթ.՝ 636 հազար ռուբլի, 1990–1991 թթ.՝ 1 մլն 420 հազար ռուբլի[41]։

1989–1991 թթ. Հայ Եկեղեցու Ռուսաստանի թեմի առաջնորդարանին Փարիզի «SOS Արմենի» կազմակերպության կողմից փախստականների համար առաքվել է 16 տոննա, ժնեւի «ՍՕՍ Արմենիե»-ից՝ 20 տոննա հագուստեղեն, Ավստրիայից, Գերմանիայից եւ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից ստացվել 12 տոննա սննդամթերք[42]։

Միայն Պետերբուրգում գտնվող Ս. Հարություն հայկական եկեղեցին աջակցում էր բռնագաղթած 800–1000 հայերի՝ դրամով, հագուստով, սննդամթերքով[43]։ Ս. Հարություն եկեղեցին նաեւ բռնագաղթած երեխաների օգնության «Ծիծեռնակ» կենտրոնի հովանավորն էր։ Եկեղեցին դիմել էր նաեւ քաղաքային իշխանություններին, որոնց միջամտությամբ «Գթություն» ընկերությունը 218 երեխայի պարբերաբար ապահովում էր սննդով[44]։

1991 թ. հուլիսին Մոսկվայի «Վերածնված Հայաստան» ընկերության նախաձեռնությամբ Պետերբուրգում 10 օրով հյուրընկալվեց Ստեփանակերտի մանկապատանեկան երգի-պարի 25 հոգուց բաղկացած համույթը[45]։ Համույթի ընդունելության կազմակերպման հարցերով զբաղվեց Եկեղեցին, որը 2000 ռուբլի տրամադրեց նրանց հանգստի կազմակերպման եւ 13 հազար ռուբլի՝ սննդի համար[46]։ Եկեղեցու շնորհիվ արցախցի երեխաները հանգստացան նաեւ Ջեռնոգորսկի ամառային ճամբարներից մեկում։

---

[40] *Տե՛ս Դիւան Մայր Աթոռի (14 դեկտեմբեր 1992, Ս. Էջմիածին), Օգնութիւններ երկրաշարժի աղէտեալներին, Արցախի ժողովրդին եւ բռնագաղթածներին, «Էջմիածին» ամսագիր, ԽԹ տարի, դեկտեմբեր, թիվ 12, Էջմիածին, 1992, էջ 20։*

[41] *Նույն տեղում։*

[42] *Նույն տեղում։*

[43] *Տե՛ս «Երեկոյան Երեւան», Երեւան, 16 հուլիսի, 1991։ Պետերբուրգի հայ եկեղեցական համայնքի հոգեւոր հովիվը 1991 թ. դրությամբ Եզրաս աբղ. Ներսիսյանն էր։*

[44] *Նույն տեղում։*

[45] *Նույն տեղում։*

[46] *Նույն տեղում։*

Տեղի հայ համայնքի ջանքերով Ս. Հարություն եկեղեցին Արցախ ուղարկեց 5 տոննա ալյուր, 100 պարկ հագուստ[47]։ Ստոկհոլմի հայ համայնքի հետ սերտ կապերի շնորհիվ, նրանց նախաձեռնությամբ եւ Եկեղեցու աջակցությամբ 6,5 տոննա սննդամթերք ուղարկվեց Հայաստան՝ որպես օգնություն Գետաշենից եւ Մարտունաշենից բռնագաղթած հայրենակիցներին[48]։

Հայ Առաքելական Եկեղեցու աջակցությունը բռնագաղթած հայրենակիցներին լայն ծավալներ էր ընդգրկել հատկապես Ռուսաստանում եւ ԱՊՀ տարածաշրջանի երկրներում, որտեղ հանգրվանել էր մեր հայրենակիցների զգալի մասը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ փլուզումից եւ նախկին միութենական հանրապետությունների անկախացումից հետո աղետի գոտու վերականգնողական ծրագիրը դադարեցվեց, կտրուկ նվազեցին միջազգային մարդասիրական օգնության ծավալները։ Իրավիճակն առավել սրվեց ազգամիջյան հակամարտությունների եւ Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման հետեւանքով։ Բնակչության ընկերային վիճակն էականորեն վատթարացավ, կտրուկ նվազեց ծնելիությունը, աճեցին մահացության ցուցանիշները, բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ վերածվեցին ավերակների, տասնյակ հազարավոր ընտանիքներ ապրում էին ժամանակավոր տնակներում։ Մեծ ծավալների հասավ արտագաղթը։ 1999 թ. հունվարի 1-ին աղետի գոտու բնակչության թվաքանակը նոր հասավ 1985 թ. մակարդակին։

ԽՍՀՄ փլուզումից հետո մինչեւ 1998 թ., տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններից ելնելով, աղետի գոտում լայնածավալ շինարարություն գրեթե չէր իրականացվում[49]։ Միայն 1998 թվականից սկսած ՀՀ կառավարությունը համապատասխան միջոցներ ձեռնարկեց, որը թույլ տվեց լուծել մի շարք խնդիրներ՝ կապված բնակարանների, դպրոցների, հիվանդանոցների եւ այլ հանրային օղակների վերականգնման հետ։

---

[47] *Նույն տեղում։*

[48] *Նույն տեղում։*

[49] *Տե՛ս* Спитакское землетрясение: Зона бедствия вчера и сегодня. Взгляд через 20 лет. Сборник документов, сост. А. Вирабян и др., Ереван, Национальный архив Армении, 2008, *էջ 14։*

Միայն 1998 թ. մինչեւ 2008 թ. սփյուռքահայ բարերարների ու կազմակերպությունների միջոցով աղետի գոտում վերսկսվեցին շինարարական աշխատանքները։

Այդուհանդերձ անգնահատելի է այն աջակցությունը, որ ցուցաբերեց համաշխարհային հանրությունը եւ Հակական սփյուռքը աղետից տուժած Հայաստանին։ Անշուշտ, այդ գործում կարեւոր դեր ստանձնեց Հայոց Եկեղեցին, որը ոչ միայն համախմբում եւ ուղղորդում էր նյութական աջակցությունը նորանկախ հայրենիքին, այլեւ ահռելի դեր կատարեց աղետից տուժած հայրենակիցների ընկերային-հոգեբանական ընտելացման-հարմարման, բարոյա-հոգեբանական աջակցության ցուցաբերման ուղղությամբ։

Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությունն Սպիտակի երկրաշարժի հետեւանքները վերացնելու եւ աղետի գոտու բնակչության ընկերային-մշակութային ադապտացման ուղղությամբ բաժանվում է հետեւյալ ուղղությունների.

Աղետի գոտու բնակչության աջակցության համար Հայաստանում եւ արտերկրում դրամական եւ նյութական միջոցների հավաքագրում։

Հոգեւոր կառույցների գործունեության ոլորտի ընդլայնում, նոր թեմերի ստեղծում աղետի գոտում։

Աղետի հետեւանքով ավերված կամ վնասված եկեղեցիների եւ տաճարների վերականգնում եւ վերակառուցում, նոր եկեղեցիների կառուցում եւ վերաօծում։

Հայոց Եկեղեցու միջոցներով եւ ուժերով աղետի գոտու բնակչության ընկերային-մշակութային աջակցության կազմակերպում։

Աղետից տուժած բնակչության տարբեր ընկերային -տարիքային խմբերի վրա ուղիղ եւ միջնորդավորված խնամակալության իրականացում։

Աղետի հետեւանքով ծնողազուրկ երեխաների ընկերային եւ դրամական աջակցության կազմակերպում։

Ընկերային-կրթական եւ մշակութային կենտրոնների («Հայորդյաց տներ») ստեղծում պատանիների եւ երիտասարդության մշակութային կարիքների բավարարման համար։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցի, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա., Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ., Սպիտակի երկրաշարժ, համատեղ հաղորդագրություն, Ստեփանավան քաղաքի վերաշինության ծրագիր, խորհրդակցական մեծ ժողով, Հայ օգնության ֆոնդ, բռնագաղթածներ:

РЕЗЮМЕ

В последнее десятилетие 20-го века в армянской действительности произошли радикальные изменения и сдвиги, которые оказали значительное влияние на общественно-политическую, социально-экономическую и культурную жизнь страны. Особенно сильно на независимую Республику Армения повлияло Спитакское землетрясение 7 декабря 1988 года, которое нанесло огромные ущербы стране.

В свою очередь, распад Советского Союза привел к разрушению существующей инфраструктуры Республики, которое также ухудшило социально-экономическое положение страны.

В статье кратко представлена важная роль Армянской Апостольской Церкви в сложившихся условиях, в организации и направлении помощи Диаспоры пострадавшей от стихийного бедствия Родине, в стабилизации морально-психологического состояния населения, в восстановлении зоны бедствия, в разработке и реализации программы реконструкции города Степанаван, в поддержке Арцахской национально-освободительной борьбы, депортированных армян, совместно с государственными властями независимой Республики Армения по реализации программ, направленных на развитие и становление Родины.

SUMMARY

In the last decade of the 20th century, radical changes and shifts took place in the Armenian reality, which had a significant impact on the socio-political, socio-economic and

cultural life of the country. The independent Republic of Armenia was particularly affected by the Spitak earthquake on December 7, 1988, which caused enormous damage to the country.

In turn, the collapse of the Soviet Union led to the destruction of the existing infrastructure of the Republic, which also worsened the socio-economic situation of the country.

The article briefly presents the important role of the Armenian Apostolic Church in the current conditions, in organizing and directing the Diaspora's assistance to the Homeland affected by the natural disaster, in stabilizing the moral and psychological state of the population, in restoring the disaster zone, in developing and implementing the reconstruction program for the city of Stepanavan, in supporting the Artsakh national liberation struggle, the deported Armenians, together with the state authorities of the independent Republic of Armenia for the implementation of programs aimed at the development and establishment of the Motherland.